ՀՀ Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով

Պաշտոնի անվանում՝ Իրավաբան փորձագետ

Կարճաժամկետ՝ ս.թ.ապրիլից մինչև մայիսն ընկած ժամանակահատվածում՝ ընդհանուր 20 աշխատանքային օր:

Երևան, ՀՀ

Բացման օր՝ ապրիլի 17, 2018

Դիմումների ներկայացման վերջնաժամկետ՝ ապրիլի 27, 2018

Մեկնարկ՝ հնարավորինս շուտ

Աշխատավարձ՝ Մրցակցային

Դիմելու ընթացակարգ՝ Բոլոր հետաքրքրված թեկնածուները պետք է իրենց ինքնակենսագրությունները (CVs) ուղարկեն secretariat.ccm@gmail.com էլեկտրոնային հասցեով: Նամակի վերնագրում խնդրում ենք նշել այն պաշտոնի անվանումը, որի համար դիմում եք: Ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

Աշխատանքի նկարագիր: Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀԻ, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջացոռումները համակարգող հանձնաժողովի “Անցումային և կայունության պլանի” մշակման ժամանակավոր գործող աշխատանքային խումբը, Կուրացիո միջազգային հիմնադրամի կողմից ներկայացված փորձագետի հետ համատեղ, մշակել է “Հայաստանի Հանրապետության անցումային և կայունության պլանի” (այսուհետ՝ ԱԿՊ) նախագիծը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի կողմից ներկայացված պահանջի համաձայն նախատեսվում է ԱԿՊ պլանը ընդունել իրավական ակտով, որի փաստաթղթային ձևի կազմակերպման նպատակով հայտարարում է հետևյալ մրցույթը:

Պարտավորություններ՝

1. Ուսումնասիրել ներկայիս օրենսդրական դաշտը՝ ԱԿՊ փաստաթղթի իրավական տեսքի վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու համար:
2. Ուսումնասիրել «Անցումային պատրաստվածության պլանը» և վերաձևակերպել այն համապատասխան իրավական ակտի ձևաչափով՝ հաստատման ներկայացնելու նպատակով:
3. Մշակել ԱԿՊ-ին իրավական հիմք տալու գործողությունների պլան,
4. Փաստաթղթի մշակման ամբողջ ընթացքում սերտորեն համագործակցել Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջացոռումները համակարգող հանձնաժողովի “Անցումային և կայունության պլանի” մշակման ժամանակավոր գործող աշխատանքային խմբի հետ:
5. Ներկայացնել ԱԿՊ-ն նոր ձևաչափով ներկայացված փաստաթուղթը ՄՀՀ-ին և ստացված մեկնաբանությունների/դիտողությունների դեպքում վերանայել այն:
6. Ներկայացնել իրավական ակտի նախագծի վերջնական տարբերակը ՄՀՀ քարտուղարությանը:

Պահանջվող որակավորում

- Բարձրագույն իրավաբանական կրթություն,
- Նմանատիպ իրավական փաստաթղթերի հետ աշխատելու առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ (ցանկալի է առողջապահության ոլորտում),
- Իրազեկվածություն Գլոբալ հիմնադրամի կողմից իրավական փաստաթղթերի համար սահմանված պահանջների և ՀՀ իրավական փաստաթղթերին ներկայացվող պահանջների վերաբերյալ:
- Պրոֆեսիոնալ և բանակցային հաղորդակցման, ինչպես նաև թիմում աշխատելու հմտություններ,
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն,
- Անգլերեն լեզվի իմացություն ԱԿՊ անգլերեն և հայերեն տարբերակների միջև համապատասխանություն ապահովելու նպատակով
- Ճկունություն, անկախ և լարված պայմաններում աշխատելու ունակություն,
- Վերլուծական մտածելակերպ, նվիրվածություն աշխատանքին և պատասխանատվություն: